



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 28 » 09 2020թ.

№ 08/ԼԱ/-415

Սեպտեմբերի 21-27-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Սեպտեմբերի 21-ին տեղ-տեղ, 22-ին, 25-27-ին՝ շրջանների զգալի մասում, 23-ի գիշերը՝ առանձին շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների առավելագույն գումարային քանակը կազմել է Վանաձորում՝ 57մմ, Ստեփանավանում՝ 40մմ, Ճամբարակում՝ 35մմ, Աշոցքում՝ 32մմ, Օձունում՝ 28մմ, Դիլիջանում՝ 24մմ: Մնացած շրջաններում դիտվել են մինչև 8-19մմ տեղումներ (Երևանում և Արարատյան դաշտում՝ մինչև 1-3մմ): Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը սեպտեմբերի 21-23-ին նորմայից բարձր է եղել 1-2 աստիճանով, 24-ին, 26-27-ին՝ 1-3 աստիճանով, 25-ին՝ 2-4 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է սեպտեմբերի 25-ին. Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Սյունիքի հովիտներում դիտվել է $+28...+32^{\circ}\text{C}$ (Թալին՝ $+24^{\circ}\text{C}$, Եղվարդ՝ $+26^{\circ}\text{C}$), Տավուշում՝ $+22...+27^{\circ}\text{C}$, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ $+20...+25^{\circ}\text{C}$ (Սեմյոնովկա՝ $+16^{\circ}\text{C}$):

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է սեպտեմբերի 21-22-ին. Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ $+5...+10^{\circ}\text{C}$ (Գավառում, Մասրիկում, Ապարանում, Ծաղկահովիտում՝ $+4^{\circ}\text{C}$, Աշոցքում՝ $+1^{\circ}\text{C}$, Տաշիրում՝ $+2^{\circ}\text{C}$), Տավուշում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ $+10...+15^{\circ}\text{C}$ (Դիլիջան՝ $+8^{\circ}\text{C}$, Արաբկիր՝ $+16^{\circ}\text{C}$):

Սեպտեմբերի 22-ին՝ Արթիկում և Արաբկիրում, 25-ին՝ Ապարանում դիտվել է քամի 5-6 մ/վրկ, պողթկումները՝ մինչև 16-18մ/վրկ արագությամբ:

Սեպտեմբերի 24-ին Թալինում և Աշտարակում դիտվել է 13-16մ/վրկ արագությամբ քամու ուժգնացում, պողթկումները՝ մինչև 20/վրկ արագությամբ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1սմ-ով և կազմել՝ 1900.65 մ (27.09.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 6 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան

Տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյան
հեռ.՝ 012 31 79 29